| | | |
|---|---|---|
| 1. Եղիշէ եպիսկոպոս Զիլինկիրեան | . | 39 ձայն |
| 2. Գէորգ եպս. Երէցեան | . . . | 34 » |
| 3. Տրդատ եպս. Պալեան | . . . | 29 » |
| 4. Եղիա վարդապետ | . . . | 29 » |
| 5. Գրիգորիս վարդապետ | . . . | 28 » |
| 6. Վահան վրդտ. | . . . . | 26 » |
| 7. Հմայեակ վրդտ. | . . . . | 25 » |

Տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսի անունը ընտրելիների ցանկի մէջ չկայ, կարծւում էր թէ ինքն է հրաժարուել, և պատրիարքական ընտրութիւնից յետոյ տկարութեան պատճառով կամենում է գնալ Եգիպտոս բուժուելու։

Երուսաղէմացիք իրանց ներքին կանոնադրութիւնը ի նկատի ունենալով՝ կազմել են ընտրելիների եռանուն ցանկ։ Ս. իսկ Կ. Պոլսոյ պատրիարքարանի կենդրոնական վարչութիւնը հիմնուելով Սահմանադրութեան կանոնների վերայ, կամենում է ի նկատի ունենալ միայն եօթանուն ցանկը առարկելով, որ Երուսաղէմի ներքին կանոնադրութիւնը նոյն իսկ վանքում կիրառութեան մէջ չէ եղել։

Ինչպէս երևում է յետոյ ստացուած տեղեկութիւններից՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքում ցաւալի երկպառակութիւնը սուր կերպարանք է ստացել և դրա հետևանքով պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ արքեպիսկոպոսը հեռացել է վանքից, թէև Կ. Պոլսոյ կենտրոնական վարչութիւնը առաջադրել է վերադառնալ վանք և շարունակել իւր պաշտօնը, իսկ կենտրոնի նշանակած լիազօր Խոճասարեան էֆ. վերադարձել է Կ. Պոլիս։

---

## ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

### Հայ-կաթոլիկ եպիսկոպոսների ձեռնադրութիւն.

Կիւրակէ, հոկտեմբերի 22ին, Ն. տ. Ս. Նիկողայոս Տոլեատինացու եկեղեցում Պողոս-Պետրոս ԺԴ. Թերզեան պատրիարքը, որ Հռովմում է գտնւում Հայ-կաթոլիկների

ժողովին նախագահելու համար, ուր եպիսկոպոս է ձեռնադրել։

Ձեռնադրութեանը ներկայ են եղել բազմաթիւ անձինք, լատին եպիսկոպոսներ, ուսուցչապետներ, քժիշկներ, ճարտարապետներ և զանազան կրօնական միաբանութիւններից ներկայացուցիչներ։

## Հայ-կաթոլիկ եպիսկոպոսների ժողովը Հռոմում.

Հայ-կաթոլիկ եպիսկոպոսների ժողովին մասնակցելու Հռոմ գնացող Սեբաստիայի և Խարբերդի Փէչէճեան և Իսրայէլեան եպիսկոպոսները պատերազմի պատճառով կառավարութիւնից արգելուում են կ. Պոլսում, սակայն նրանք հայ-կաթոլիկ պատրիարքարանի միւս կողմի դռնից դուրս գալով՝ առաջուց պատրաստել տուած անցագրերով փախուստ են տալիս. Սիրքէճիի մէջ պաշտօնեաներին համոզելով որպէս թէ Վենետիկ են գնում. Իսկ Տիգրանակերտի Զէլէպեան եպիսկոպոսը երբ պատրաստուում էր Հռոմ գնալ, արգելուել է Բէրութում։

## Պատրիարքական փոխանորդի փոփոխութիւն.

Պատրիարքական փոխանորդ Ճամճեան եպիսկոպոսը տեսնելով, որ Թէրզեանի կողմից փոխանորդ է դրուած մի վարդապետ, (որի պաշտօնը թէև կառավարութիւնը չի ընդունում) հեռացել է իւր թեմը—Բրուսա։

---

## ՌՈՒՍ ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ.

### Մի դատանութիւնից մի այլ դատանութիւն անցնելու օրինագիծ (Церк. Вѣст. № 45).

Պետական Խորհուրդը նոյեմբերի 4-ի նիստին սկսեց քննել մի դատանութիւնից մի այլ դատանութիւն անցնելու օրինագիծը, որ ներմուծուած էր Պետական Դումայից։ Կառավարութիւնը Պետական Դումա էր մուծել դատանութեան օրինագիծը 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի և նոյն թուի ապրելի 17-ի հրովարտակի արդ-